

Մարիամ Աստվածածնի վերափոխման տոն կամ Խաղողօրհներ



ՀԵՊ ուսուցչուհի՝ Ն. Զեյնալյան

Օգոստոսի 15-ի մոտակա կիրակի օրը Հայ Առաքելական
Եկեղեցին նշում է Աստվածածնի Վերափոխման տոնը: Այն
Հայ Առաքելական Եկեղեցու հինգ տաղավար տոներից
չորրորդն է, և Տիրամորը նվիրված տոներից ամենահինը :



Այս օրն առավելապես ընդգծվում է
որդիական սիրո ու մայրական զուսպ
սպասման ու հավատի հանգամանքը:
Որդին, աստվածային զորքով ու
հրեշտակներով, եկավ Մոր հետևից:
Եթե երկրային կյանքից հեռանալը վատ լուր
կամ սգո առիթ է համարվում, ապա
Աստվածածնի հեռանալը ոչ թե տխրություն,
այլ ավետիս է՝ բարի լուր, քանի որ նա
վերափոխվեց երկինք՝ Որդու մոտ:
Ինչպես հղության ավետիսը ստանալիս
Մարիամը զգաց Տիրոջ ներկայությունը,
այնպես էլ երկրային կյանքի ընթացքում ու
դրա ավարտին Տերը չթողեց նրան: Փրկչի
համբարձումից տասներկու տարի անց, երբ
սուրբ Կույսն արդեն պետք է փոխվեր այս
մարմնավոր կյանքից, վերափոխումից
երեսուն օր առաջ նրան այցելեց Գաբրիել
հրեշտակապետը՝ նա, ով հղության
ավետիսն էր տվել նրան, այս անգամ տալով
երկրից երկինք փոխման լուրը:



ՀԵՊ ուսուցչուհի՝ Ն. Զեյնալյան

Մինչ հեռանալը կույսը Հովհաննեսին խնդրում է պատարագ մատուցել,
որպեսզի հաղորդվի իր Միածին Որդու Մարմնին ու Արյանը:

Այդժամ Հովհաննես առաքյալը Վերնատանը կատարեց Պատարագի
սուրբ խորհուրդը և երբ Տիրամայրը հայտնեց բոլորին իր ննջման մասին
ու մատնանշեց իր հանգստյան տեղը՝ Գեթսեմանիի պարտեզը:

Լսելով, որ Աստվածածինը պետք է հեռանա իրենցից, առաքյալները
սկսեցին ողբալ:

Հովհաննեսը վերցրեց մի տախտակ, տվեց Աստվածածնին և խնդրեց,
որպեսզի նա իր պատկերը դրոշմի դրա վրա:

Տիրամայրը վերցրեց տախտակը, խաչակնքեց և երեսին դրեց, այնուհետև
թրջեց արցունքներով և Աստծուց խնդրեց, որ այդ պատկերի միջոցով
մարդիկ բժշկվեն իրենց ախտերից և զանազան հիվանդություններից:

Երբ առաքյալները շրջապատեցին Տիրամոր մահիճը, աննկարագրելի մի
լույս երևաց:

Սենյակի վերևում հայտնվեց Քրիստոս՝ հրեշտակների զորքերով: Այդ
պահին երկնավոր արքայուհու խաղաղ ու մաքուր դեմքը ճառագում էր,
իսկ մարմնից հիասքանչ բույր էր տարածվում:

Ձեռքերը տարածելով դեպի արևելք՝ գոհանում է և օրհնում Աստծուն:

Տեսնելով իր Որդուն՝ Աստվածամայրն ավանդում է հոգին:

Աստվածամոր թաղման ժամանակ Բարդուղիմեոս
առաքյալը ներկա չէր: Երբ վերադարձավ
Երուսաղեմ, խորապես վշտացավ, որ չէր
արժանացել Սուրբ Աստվածածնին վերջին
հրաժեշտը տալուն: Առաքյալներին խնդրեց բացել
Տիրամոր գերեզմանը, որպեսզի ինքն էլ կարողանա
վերջին անգամ տեսնել նրան և

մխիթարվել: Առաքյալներն աղոթք արեցին ու
հոժարեցին եղբոր փափագը կատարել: Երբ
բացեցին գերեզմանը, Սուրբ Կույսի մարմինն
այնտեղ չգտան, այլ միայն պատանքները: Եվ նրանք
փառավորեցին Աստծուն՝ իմանալով Աստվածամոր
վերափոխման մասին:

Որպես մխիթարություն առաքյալները
Բարդուղիմեոսին տվեցին Աստվածամոր փայտի
վրա դրոշմված պատկերը: Հայկական աղբյուրներից
հայտնի է, որ Բարդուղիմեոսն այն Հայաստան
բերեց, բազմաթիվ հիվանդների բժշկեց ու դրեց
Անձևացյաց գավառի Դարբնոց քար կոչված տեղում,
որտեղ եկեղեցի կառուցվեց Աստվածածնի անունով՝
ի պատիվ Տիրամոր պատկերի: Այս հնագույն
օրինակով հայ եկեղեցիների բոլոր խորանները
Աստվածամոր անունով են և նրա պատկերով:



ՀԵՊ ուսուցչուհի՝ Ն. Զեյնալյան



Սուրբ Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնը կենցաղում առավել հայտնի է «Խաղողօրհներ» և «Աստվածածին» անուններով: Տոնակատարության օրը՝ Ս. Պատարագից անմիջապես հետո, կատարվում է խաղողօրհնության կարգ և ապա օրհնված ողկույզները բաժանվում է ժողովրդին:

Բոլոր պտուղներից առավել օրհնվում է խաղողի ողկույզը, քանի որ Տերը խաղողի որթը ամենագորավոր ծառերից ավելի վեր բարձրացրեց և պատվեց առավել, քան մյուս տնկիները՝ Իրեն Խաղողի որթ անվանելով՝ ըստ այն խոսքի, թե. «Ես եմ ճշմարիտ որթատունկը»:

Միածին Որդին Վերնատանը խորհրդավոր ընթրիքի ժամանակ գինին՝ խաղողի արյունը, Իր փրկական Արյան նյութը դարձրեց և Իր ձեռքերի մեջ վերցնելով՝ օրհնեց՝ ասելով. «Սա՛ է՛ Նոր ուխտի Իմ Արյունը»: